

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԴԱՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

**Զեկուցող՝ Հ.Ա. ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ սահմանադրական դատարանի
անդամ**

Սեմինարի հարգարժան մասնակիցներ,

Զեկուցումս, որ ներկայացնում եմ Ձեր ուշադրությանը, նվիրված է մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդրի առավել քիչ ուսումնասիրված՝ պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգին: Այդ համակարգը ձևավորված է նորանկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան եւ ի տարբերություն դատական համակարգի, հիմնականում կայացած է:

Մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության պետական ոչ դատական համակարգի ինստիտուտներն են.

- 1. ՀՀ Նախագահը,*
- 2. Ազգային ժողովը,*
- 3. կառավարությունը,*
- 4. տարածքային կառավարման մարմինները,*
- 5. ՀՀ դատախազությունը:*

Ինստիտուցիոնալ պետական համակարգի վերը թվարկված առաջին չորս ինստիտուտները Ֆրացառությամբ՝ ՀՀ դատախազության՝ ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին համապատասխան, գործում են օրենսդիր եւ գործադիր իշխանությունների տարանջատման սկզբունքով:

Նախքան մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգի գործառույթների մեկնաբանման խնդրին անդրադառնալը, կարծում եմ, անհրաժեշտ է հստակ սահմանազատել այդ համակարգի բնորոշ առանձնահատկությունները՝ համեմատելով դատական համակարգի հետ:

Ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգն ամբողջությամբ անհամեմատ ավելի հզոր է և բազմաֆունկցիոնալ է, քան ինստիտուցիոնալ դատական համակարգը: Ինչո՞ւ է դա պայմանավորված:

1. Պետական ոչ դատական համակարգում իրականացվում է պետական իշխանության ծանրակշիռ մասը՝ օրենսդիր և գործադիր իշխանությունը:

2. Պետական ոչ դատական համակարգն իր կառուցվածքային և ենթակառուցվածքային համակարգերով անհամեմատ ավելի բազմաճյուղ է, քան դատական համակարգը, և ընդգրկում է պետական ծառայության հիմնական մասը:

3. Եթե ինստիտուցիոնալ դատական համակարգի գործունեությունը բնույթով իրավակիրառական է, ապա ոչ դատական համակարգն իրականացնում է թե՛ նորմաստեղծ, և թե՛ իրավակիրառական գործունեություն:

4. Պետական ոչ դատական համակարգի ինստիտուտների գործառույթները, ի տարբերություն դատական համակարգի, հիմնականում նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ:

5. Դատական ինստիտուցիոնալ համակարգի անկախությունը, ՀՀ Սահմանադրության 94 հոդվածին համապատասխան, երաշխավորվում է պետական ոչ դատական համակարգի կարելորագույն ինստիտուտներից մեկի՝ ՀՀ Նախագահի կողմից, որը նաև կազմավորում է այդ համակարգը:

6. Պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգը, բացի զսպումների և հակակշիռների ներհամակարգային մեխանիզմներից, անհրաժեշտության դեպքում, իրավասու է դատական համակարգի գործունեության նկատմամբ գործադրել նույնպիսի մեխանիզմներ:

Անդրադառնանք պետական ոչ դատական համակարգի առանձին ինստիտուտների կողմից մարդու իրավունքների պաշտպանության գործառույթի մեկնաբանման և դրա գործադրման խնդրին:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործառույթ ՀՀ Նախագահի համար ՀՀ Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված չէ: Սակայն, դա բխում է ՀՀ Սահմանադրության 49 հոդվածի և մասամբ էլ՝ 94 հոդվածի իմաստից, համաձայն որոնց, Հայաստանի Հանրապետության Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը,

ապահովում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, երաշխավորում ՀՀ անվտանգությունը, դատական մարմինների անկախության երաշխավորն է:

ՀՀ Սահմանադրության 49 հոդվածում ամրագրված, ինչպես նաև ՀՀ Նախագահի մի շարք այլ լիազորությունների գործադրման մեխանիզմներ գործող օրենսդրությամբ նախատեսված չեն: Սահմանադրության 56 հոդվածի իմաստից է միայն ենթադրվում սահմանադրական իր լիազորությունների գործադրման մեխանիզմները Քայդ թվում նաև Սահմանադրության 49 հոդվածում նախատեսված՝ հրամանագրերով եւ կարգադրություններով որոշելու ՀՀ Նախագահի լիազորությունը: Կարծում եմ, որ այս հարցում մեծ դեր են խաղացել այնպիսի արգելակներ, համաձայն որոնց «ՀՀ Նախագահի գործառույթներն սպառիչ թվարկված են ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում, ուստի օրենսդրական լրացուցիչ կարգավորման անհրաժեշտություն չկա, դեռ ավելին, այդ կարգավորումը կարող է հակասել Սահմանադրությանը»: Թույլ տվեք չընդունել այդ տեսակետը: Խոսք կարող է գնալ ոչ թե օրենսդրորեն նոր լիազորություններ վերապահելուն, այլ ՀՀ Նախագահի սահմանադրորեն ամրագրված լիազորությունների գործադրման մեխանիզմներ նախատեսելուն: Այլ կերպ, կարող ենք, օրինակ, հարցականի տակ դնել նույնիսկ ՀՀ Նախագահին հասցեագրված քաղաքացիների դիմումների, բողոքների եւ առաջարկությունների քննարկման գործառույթը, որն իրականացվում է ՀՀ Նախագահի աշխատակազմում: Ասվածին ավելացնեմ նաև, որ օրենսդրական նախաձեռնության իրավունք ՀՀ Նախագահին սահմանադրորեն չվերապահելը տեսականորեն էական արգելակ է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության դիրքերում իրավական առավել ակտիվ լծակներ գործադրելու համար:

Այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտության դեպքում, օրինակ, մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նկատառումներով, ՀՀ Նախագահն իրավասու է.

1. չստորագրել Ազգային ժողովի ընդունած օրենքը եւ իր առարկություններով ու առաջարկություններով վերադարձնել այն՝ պահանջելով նոր քննարկում ՔՍահմ. 55 հոդվածի 2-րդ կետ՝

2. Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը ՔՍահմ. 55 հոդվածի 3-րդ կետ՝

3. ազատել վարչապետին, կառավարության անդամներին, ընդունել կառավարության հրաժարականը ՔՍահմ. 55 հոդվածի 4-րդ կետ, օրինակ, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն երաշխավորելու նկատառումներով՝

4. չկնքել միջազգային այնպիսի պայմանագրեր, չստորագրել Ազգային ժողովի վավերացրած միջազգային այնպիսի պայմանագրեր, կամ չվավերացնել միջկառավարական այնպիսի պայմանագրեր, որոնք, իր համոզմամբ, կարող են խախտել մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքները եւ ազատությունները ՔՍահմ. 55 հոդվածի 7-րդ կետ՝

5. վարչապետի առաջարկությամբ ազատել գլխավոր դատախազին ՔՍահմ. 55 հոդվածի 9-րդ կետ՝

6. Արդարադատության խորհրդի առաջարկով ազատել դատավորների, գլխավոր դատախազի տեղակալների, դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ գլխավորող դատախազների ՔՍահմ. 55 հոդվածի 11-րդ կետ՝

7. որոշում ընդունել զինված ուժերի օգտագործման վերաբերյալ ՔՍահմ. 55 հոդվածի 13-րդ կետ՝ Քօրինակ, Հանրապետության վրա զինված հարձակման դեպքում՝

8. սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում իրականացնել իրավիճակից թելադրվող միջոցառումներ ՔՍահմ. 55 հոդվածի 14-րդ կետ՝

9. ներում շնորհել դատապարտյալներին ՔՍահմ. 55 հոդվածի 17-րդ կետ՝

Մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ապահովելու լիազորություն ՀՀ Նախագահը կարող է իրականացնել նաեւ կառավարության որոշումները վավերացնելու, կառավարության կառուցվածքն ու գործունեության կարգը սահմանելու, ինչպես նաեւ օրենսդրության ակտերի սահմանադրականության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանին դիմելու միջոցով ՔՍահմ. 85, 86 եւ 100 հոդվածներ՝

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության պետաիրավական գործառույթն առավել արդյունավետ համակարգելու նպատակով, կարծում եմ, որ ՀՀ Նախագահը լիարժեք պետք է գործադրի ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 6-րդ կետով վերապահված լիազորությունը՝ իրեն առընթեր կազմավորելով Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերով զբաղվող խորհրդակցական մարմին՝ Քցանկացած անվանումով, կամ համանման կառուցվածքային ստորաբաժանում նախատեսվի ՀՀ Նախագահի աշխատակազմում: ՀՀ Նախագահին առընթեր խորհրդակցական մարմնի կազմում, կարծում եմ, անհրաժեշտ կլինի ապահովել եւ՝ պետական եւ թե՛ ոչ պետական համակարգի համապատասխան ինստիտուտների ներկայացուցիչներ՝ Ֆիրավաբաններ, միջազգայնագետներ, պատգամավորներ, գիտնականներ, հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների ներկայացուցիչներ եւ այլն:

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ինստիտուցիոնալ պետական համակարգում հաջորդ կարելորագույն տեղը զբաղեցնում է Ազգային ժողովը, որի գործառույթը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հիմնականում բխում է ՀՀ Սահմանադրության 62 հոդվածից եւ մասամբ՝ Սահմանադրության 74 հոդվածից: Վերջինիս դեպքում, Ազգային ժողովն իրավասու է անվստահություն հայտնել կառավարությանը՝ նկատի ունենալով նաեւ կառավարության գործունեության ծրագրային այն թերացումները, որոնք առնչվում են մարդու իրավունքների պաշտպանությանը:

Իրականացնելով օրենսդիր իշխանություն, Ազգային ժողովը ներագրում է պետական եւ հասարակական կյանքի, այդ թվում նաեւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների իրացման եւ պաշտպանության բոլոր բնագավառների վրա: Կարելի է միանշանակ պնդել, որ Ազգային ժողովի օրինաստեղծ աշխատանքի արդյունավետությունից է մեծապես կախված նաեւ մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների իրացման արդյունավետությունն ու վերջինիս օրենսդրական երաշխավորվածությունը: Այս ոլորտում, եւ մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությանը օրենսդրությունը համապատասխանեցնելու եւ մարդու սահմանադրական իրավունքների լիարժեք գործադրումն ապահովող օրենքներ ընդունելու ուղղությամբ, լուրջ անելիքներ

կան: Նրանից, թե գործող օրենսդրությամբ որքանով է երաշխավորված մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների լիարժեք իրացման հնարավորությունը, մեծապես կախված է պետության, որպես մարդու եւ քաղաքացու գլխավոր իրավապաշտպանի, ամենահիմնական գործառույթներից մեկի գործադրման արդյունավետությունը, այնքանով էլ պետությունը կգնահատվի որպես իրավական եւ ժողովրդավարական: Նորանկախ Հայաստանի Սահմանադրության ընդունումից ի վեր անցել է ավելի, քան երկու տարի, եւ Ազգային ժողովի կողմից ընդունվել են շուրջ 130 օրենքներ, այդ թվում՝ մարդու եւ քաղաքացու քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների գործադրումն ապահովող, մասնավորապես քաղաքացիության, պետական կենսաթոշակային ապահովության, բժշկական օգնության եւ սպասարկման, երեխայի իրավունքների, սեփականատիրական հարաբերությունների մասին եւ բազմաթիվ այլ օրենսդրական ակտեր: Սակայն, ամենեւին էլ հեռու եմ այն մտքից, թե Ազգային ժողովի կողմից ձեւավորվել է անհրաժեշտ իրավական դաշտ քաղաքացիների սահմանադրորեն ամրագրված իրավունքների ու ազատությունների անշեղ գործադրումն ապահովելու համար: Նախ, համոզված եմ, որ ընտրությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենքները կատարելագործելու անհրաժեշտությունը օրակարգում կմնա այնքան ժամանակ, քանի դեռ օրենսդրորեն հստակ երաշխավորված չեն ընտրությունների լիարժեք վերահսկելիությունը, ընտրական ողջ գործընթացի հրապարակայնությունը, ժողովրդի կամքի անկաշկանդ դրսևորման հնարավորությունը:

Դեռեւս օրենսդրական կարգավորման չեն ենթարկվել կամ ոչ բավարար են կարգավորվել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ամրագրող սահմանադրական որոշ նորմեր: Թվարկեմ դրանցից մի քանիսը.

1. ՀՀ Սահմանադրության 16 հոդվածում սահմանված է օրենքի առջեւ առանց խտրականության բոլորի հավասարության սկզբունքը եւ դրա պաշտպանելիությունը օրենքով: Համաձայնվեք, որ խորհրդային ժամանակներից ի վեր գործող քրեական եւ քաղաքացիական օրենսդրության առկայության, ինչպես նաեւ պետական ծառայության մասին, արդարադատության ոլորտի, ոստիկանության, դատախազության մասին եւ կարելորագույն այլ օրենքների բացակայության

պայմաններում սահմանադրական վերոհիշյալ դրույթի անշեղ կիրառումն երաշխավորված համարել չի կարելի:

2. Սահմանադրության 18, 20, 28, 38, 39, 40 եւ 41 հոդվածներում ամրագրված մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են արդարադատության, խախտված իրավունքների վերականգնման ոլորտներում մարդու եւ քաղաքացու մի շարք իրավունքներին, դեռեւս անիրագործելի են կամ համապատասխան օրենքների բացակայության կամ էլ անցյալից ժառանգված եւ վերոնշյալ իրավահարաբերությունները նոր համակարգի պայմաններում կարգավորելու անընդունակ օրենքների առկայության պատճառով: Կարծում եմ, քանի դեռ մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում առկա օրենսդրական հիմնախնդիրները լուծված չեն, արդարացված չէ մարդու իրավունքների հիմնահարցերով Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի բացակայությունը:

Մարդու իրավունքների պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգում հաջորդ եւ կենտրոնական տեղը պատկանում է կառավարությանը: Ի տարբերություն ՀՀ Նախագահի եւ Ազգային ժողովի, կառավարության առջև սահմանադրական առավել կոնկրետ խնդիր է դրված. ձեռնարկել միջոցներ օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման ուղղությամբ №9 հոդվածի 7-րդ կետ: Այս բնագավառի կարելորագույն հիմնախնդիրներն են.

1. կառավարման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների իրականացումը,

2. օրենսդրական բազայի ընդլայնումը:

Թվարկածս հիմնախնդիրները ձեւակերպմամբ չնայած կարճ, սակայն բովանդակությամբ անհամեմատ ընդգրկուն են: Ըստ էության, դրանք իրավական, սոցիալական պետության կառուցման ու զարգացման, մարդկանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների հուսալի պաշտպանությունն ապահովելու անցման շրջանի ռազմավարական խնդիրներ են: Անհնարին է Հայաստանում պատկերացնել մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխավորված համակարգ, առանց կառավարման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների:

Գործող օրենսդրությամբ քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման կառավարության սահմանադրական գործառնությունների իրականացման մեխանիզմ, գրեթե, նախատեսված չէ, բացառությամբ ՀՀ Նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը եւ գործունեության կարգը սահմանելու մասին» հրամանագրի, որում սահմանված է միայն խնդրի մասնակի լուծման մեխանիզմ, այն է՝ կառավարության քարտուղարության կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպումը եւ նրանց դիմումների, գանգատների եւ առաջարկությունների քննարկումը: Վերոհիշյալ հրամանագրի 91 կետի համաձայն, կառավարության քարտուղարությունում քաղաքացիների ընդունելության եւ նրանց դիմումների, գանգատների ու առաջարկությունների քննարկման ուղղությամբ տարված աշխատանքի արդյունքները, ինչպես նաեւ այդ աշխատանքի վիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առանձին նախարարությունների, գործադիր իշխանության հանրապետական եւ տարածքային մարմինների հաշվետվությունները պարբերաբար պետք է քննության առնվեն կառավարության նիստերում: Սակայն, կառավարության 1995-97 թթ. ընդունած որոշումների վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների ապահովման, Քրացի սոցիալական ապահովության ոլորտից կամ քաղաքացիների դիմումների, գանգատների եւ առաջարկությունների քննարկման ուղղությամբ Հանրապետության գործադիր իշխանության մարմինների կատարած աշխատանքի, եւ ընդհանրապես, մարդու իրավունքների հիմնահարցի հետ կապված ամենօրյա խնդիրները դուրս են մնացել կառավարության ուշադրությունից:

Նոր պայմաններում պետական մեքենան անհնար է աշխատեցնել հին մեթոդներով: Կարծում եմ, խիստ անհրաժեշտ է մարդու իրավունքների հիմնահարցերով զբաղվող մասնագիտացված կառույցների ստեղծման անհրաժեշտությունը նաեւ գործադիր իշխանության ոլորտում: Եթե կառավարության կառուցվածքում այդ նպատակով առանձին նախարարության կամ վերջինիս կարգավիճակով գերատեսչության ստեղծումը ֆինանսական եւ կազմակերպական նկատառումներով կարող է առայժմ դժվար իրագործելի լինել, ապա որոշ նախարարությունների Ֆորինակ, արդարադատության, արտաքին

գործերի, ներքին գործերի եւ ազգային անվտանգության, սոցիալական ապահովության^Բ ինչպես նաեւ կառավարության աշխատակազմում համապատասխան ստորաբաժանումների ստեղծումը համարում եմ խիստ հրատապ: Այստեղ տեղին է վկայակոչել ԱՄՆ-ի փորձը: Ամերիկյան արդարադատության նախարարությունում 1957 թվականին ստեղծվել է քաղաքացիական իրավունքների բաժին, որի գործառույթն է հետեւել ռասայական եւ ազգային խտրականությունը արգելող, կրոնական ազատության վերաբերյալ ֆեդերալ օրենքների ճշկրիտ կատարումը, այսինքն՝ բաժինը ապահովում է մարդու այնպիսի իրավունքների ու ազատությունների պաշտպանություն, որոնք երաշխավորված են ԱՄՆ Սահմանադրությամբ: Համանման օրինակներ կարելի է բերել նաեւ այլ երկրների փորձից:

Գործադիր իշխանության ոլորտում քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտի կառավարումն իրականացնող այնպիսի կառույց, ինչպիսին է ՀՀ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունը, առայժմ գործում է ոստիկանության, օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքների բացակայության պայմաններում: Անբավարար իրավական կարգավորման է ենթարկված նաեւ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի, ինչպես նաեւ կրթության եւ գիտության կառավարման բնագավառները:

Անհրաժեշտ է պետության հովանավորությամբ հիմնովին ուսումնասիրել մարդու իրավունքների ու ազատությունների հիմնահարցը Հայաստանում, եւ առաջին հերթին գործադիր իշխանության այն կառույցներում, որտեղ խախտված իրավունքների խնդրով քաղաքացիներն առավել հաճախ են դիմում: Այդ աշխատանքի նկատմամբ համակարգված մոտեցումը, համապատասխան պետական մարմնի, պաշտոնատար անձի կողմից ենթադրում է ոչ միայն մարդու խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված գործնական քայլեր, այլեւ վիճակագրական-վերլուծական ամենօրյա աշխատանք, համապատասխան առաջարկությունների մշակում Կայդ թվում նաեւ գործող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարման նպատակով^Բ եւ համակարգված ձեռով դրանք կառավարության քննարկմանը ներկայացում:

Խիստ կարևոր է, հատկապես, ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգի պետական ծառայողի՝ պաշտոնատար անձի, իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, նրա կողմից գործող օրենսդրության իմացությունը: Այս խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է, միջազգային փորձի ներդրմամբ, հիմնովին վերակառուցել պետական կառավարման ոլորտում կադրերի ուսուցման եւ վերապատրաստման համակարգը:

Գործադիր իշխանության ոլորտում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը երաշխավորելու են կոչված նաև տարածքային կառավարման մարմինները: Պետք է փաստել, որ այստեղ վիճակն անմխիթար է: Մարզային կառավարման բնագավառում սահմանադրորեն որոշարկված չէ ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործառույթը, այլև մարզային կառավարման գործառույթն ընդհանրապես: Այդ գործառույթներն որոշարկված չեն նաև օրենքով, ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց լիազորությունների շրջանակն որոշված է Սահմանադրությամբ եւ «Տեղական ինքնակառավարման մասին» 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ օրենքով: Այստեղ ակնհայտ է անհամամասնություն: Հանրապետության մարզերում պետական կառավարման գործառույթը կարգավորվում է միայն ՀՀ Նախագահի՝ 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» եւ «Երեւան քաղաքում պետական կառավարման մասին» հրամանագրերով, այն դեպքում, երբ ՀՀ Նախագահին սահմանադրորեն այդպիսի լիազորություն պատվիրակված չէ:

Վերոհիշյալ հրամանագրերի համաձայն Երեւանի քաղաքապետը, մարզպետը լիազորված են իրենց իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել քաղաքացիների իրավունքները եւ ազատություններն ապահովելու համար, իսկ քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների, գանգատների քննարկման կազմակերպումը հանձնարարված է Երեւանի քաղաքապետարանի, մարզպետարանի քարտուղարներին: Այսինքն, հաստատագրված է միայն լիազորությունը, եւ ոչ միայն օրենքով, այլև ենթաօրենսդրական ակտերով՝ տվյալ դեպքում ՀՀ Նախագահի հրամանագրերով, որոշված չեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու

ազատությունների պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների լիազորությունների գործադրման մեխանիզմները, մի հանգամանք, որն իմ գնահատմամբ, իրավաբանորեն անկառավարելի վիճակ է ստեղծում քաղաքացի-տարածքային կառավարման մարմին հարաբերություններում, կամ այդ հարաբերություններին հաղորդում է միակողմանի բնույթ՝ քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման հարցի օրինական լուծումը ուղղակի կախման մեջ դնելով պետական պաշտոնյայի կամահայտությունից:

Անհրաժեշտ է տարածքային կառավարման գործառույթի, այդ թվում՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության, իրականացման կարգավորումը բարձրացնել օրենքի աստիճանի, ինչպես դա տեղի ունի տեղական ինքնակառավարման գործառույթի դեպքում:

Ի լրումն վերը շարադրվածի, հարկ է նշել, որ առայսօր կառավարությունում ավարտված չեն, նույնիսկ, մարզերի ու Երևան քաղաքի պետական կառավարման համակարգին առնչվող իրավական ակտերի նախագծերը նախապատրաստելու աշխատանքները, որն, ինչ խոսք, էական ազդեցություն է գործում նաև մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում այդ մարմինների ունեցած առնչությունները հստակեցնելու գործում:

Մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգում իր ուրույն տեղն ունի ՀՀ դատախազությունը: Ինչպես տարածքային կառավարման մարմինների, այնպես էլ դատախազության դեպքում, պետք է նշել, որ մարդու իրավունքների պաշտպանության խնդիր այդ մարմնի առջև սահմանադրորեն դրված չէ, այնուհանդերձ, իրականացնելով Սահմանադրության 103 հոդվածով պատվիրակված լիազորությունները, դատախազությունն իր ընթացիկ գործունեությամբ պաշտպանում է ոչ միայն պետական շահերը, այլև քաղաքացիների՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքները եւ ազատությունները: Մասնավորապես, այդ գործառույթն իրականացվում է քրեական հետապնդում հարուցելիս, նախաքննության եւ հետաքննության

օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, դատարանում մեղադրանքը պաշտպանելիս, դատարանների վճիռները, դատավճիռները եւ որոշումները բողոքարկելիս, ինչպես նաեւ պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելիս:

Չեմ կարծում, թե դատախազության մասին օրենքի շուտափույթ ընդունման անհրաժեշտությունն որեւէ կերպ վիճարկվի: Անհրաժեշտ է ոչ միայն օրենսդրորեն հստակեցնել դատախազական հսկողության գործադրման մեխանիզմը, այլեւ որոշարկել այդ մարմնի առնչությունները մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այդ գործում պետական մյուս մարմինների, մասնավորապես՝ պետական ինստիտուցիոնալ համակարգի առանձին կառույցների հետ: Իմ համոզմամբ, դատախազությունն այս հարցում օրենսդրորեն պետք է ստանձնի միջինստիտուցիոնալ, կամ միջգերատեսչական գործառույթներ, աջակցի նաեւ օրենսդիր եւ գործադիր իշխանությանը՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում կիրառելու «զսպումների եւ հակակշիռների» մեխանիզմներ՝ դրանով իսկ լուրջ դեր ստանձնի պետական ողջ իմունտհամակարգի անխափան գործունեությունն ապահովելու խնդրում: Այս առումով, անհրաժեշտ է նաեւ վերանայել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգատները քննարկելու կարգի մասին» 1990 թվականի դեկտեմբերի 4-ի օրենքը՝ նախատեսելով օրենսդիր, գործադիր մարմինները դատախազություն հարաբերությունների հստակ գործող մեխանիզմ՝ կապված քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ գանգատների արագ, օբյեկտիվ, լիարժեք քննարկման եւ դրանց օրինական լուծումն ապահովելու խնդրի հետ:

Կարծում եմ, որ ՀՀ դատախազությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերով զբաղվող կառուցվածքային ստորաբաժանում նախատեսելն ավելի արդյունավետ կդարձնի դատախազական հսկողությունն այդ ոլորտում, եւ կօգնի նաեւ վեր հանելու մարդու իրավունքների պաշտպանության բնագավառի այն խնդիրները, որոնք լուծման կարիք կունենան օրենսդիր եւ գործադիր իշխանության մարմինների կողմից:

Մեր հասարակությունում, ինչպես նաեւ պետական ծառայության ոլորտում արմատացած է այն կարծիքը, որ մարդու իրավունքների ու ազատությունների

պաշտպանության պետաիրավական գործառույթը գլխավորապես պետք է իրականացնի դատարանը: Չժխտելով, իհարկե, դատարանի, որպես արդարադատություն իրականացնող միակ պետական մարմնի, դերը մարդու եւ քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում, միաժամանակ պետք է կարեւորել պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգի կարեւորությունն այդ խնդրում: Դատարաններում քննվող գործերի մեծամասնությունն արդյունք են ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգի կառույցներում քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման խնդրի նկատմամբ ոչ բավարար պատասխանատվության, կամ, շատ հաճախ՝ այդ կառույցներում քաղաքացիների իրավունքների ու ազատությունների խախտման:

Ամփոփելով, նշենք, որ պետական ոչ դատական ինստիտուցիոնալ համակարգում մարդու իրավունքների ու ազատությունների բավարար պաշտպանություն ապահովելու նպատակով, Հանրապետության օրենսդիր եւ գործադիր մարմինների առաջիկա գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի՝

1. գործող օրենսդրության անկատարության վերացմանը,
2. պետական ծառայության ոլորտում իրավագիտակցության մակարդակի եւ կատարողական կարգապահության բարձրացմանը,
3. մարդու իրավունքների պաշտպանության գործառույթի իրականացման գործում պետական ոչ դատական կառույցներում ֆունկցիոնալ գործունեության ներհամակարգային ներդաշնակության ապահովմանը, այդ բնագավառում կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը: